ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____Ս. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի

կառավարման խորհրդի նախագահ

«20» _____08_____ 2020 թվական

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԱՄԲԻՈՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ

Քննարկվել և հավանության է արժանացել

ԿՏՊՔ-ի ուսումնամեթոդական խորհրդում

« 18 »-----օգոստոս-----2020թ.

ՀՐԱԶԴԱՆ 2020

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների վարիչների կողմից դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման կարգը:
2. Ամբիոնի վարիչի պարտադիր պարտականությունների մեջ է մտնում ամբիոնի դասախոսների դասալսումները և դրանց քննարկման կազմակերպումը:
3. Սույն կանոնակարգում փոփոխություններն ու լրացումները հաստատվում են նույն կարգով:

II. ԱՄԲԻՈՆԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ամբիոնի վարիչը կատարում է ամբիոնի դասախոսների դասալսումներ ըստ ամբիոնի նիստում հաստատված ժամանակացույցի (պլանավորված և չպլանավորված):
2. Յուրաքանչյուր դասալսում՝ ամբիոնի վարիչի կողմից կատարված եզրակացությամբ, դիտողություններով և առաջարկներով, գրանցվում է համապատասխան մատյանում:
3. Ամբիոնի դասախոսների դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերի ժամանակ:
4. Քննարկման արդյունքները համապատասխանաբար արձանագրում և գնահատում են դասախոսի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպչական, «ուսանող-դասախոս» հարաբերությունների ձևավորման ունակությունները, դասը կազմակերպելու և վարելու ժամանակակից մեթոդների կիրառումը և այլն:
5. Ամբիոնների դասախոսների դասալսումների քննարկման և գնահատման արդյունքները հաշվի են առնվում դասախոսական անձնակազմի փորձաշրջանի հաղթահարման, ինչպես նաև պայմանագրի կնքման ժամանակ:
6. Ամբիոններում կատարվում են նաև փոխադարձ դասալսումներ՝ ըստ ուսումնական մասի կազմած ժամանակացույցի: Դրանց արդյունքները քննարկվում են ամբիոնների նիստերում:

III. ԱՄԲԻՈՆԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

1. Ամբիոնների հաստատված գործավարության պարտադիր ցանկում ընդգրկվում է «Դասալսումների գրանցման մատյան»-ը:
2. Ամբիոնի նիստերում դասալսումների քննարկման արձանագրված արդյունքները և որոշումները ներկայացվում են ուսումնամեթոդական խորհրդին:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի պարտականությունները

կատարող Վ. Թովմասյան